

նէութիւնը, սակայն անուրանալի է նրա ահագին հեղինակութիւնը իր ժամանակիցների վրայ և կատարած գերը մեր նոր կեանքի հոսանքների մէջ:

Աւելորդ է ասել որ հրատարակութիւնը գեղեցիկ է և մեծ խնամքով կատարուած, մի բան որ յատուկ է պ, լէօի լոյս ընծայած բոլոր գրքերին:

Ա. Սմբատ Գարբիկեան «Հայկական ձգնաժամն եւ վիրածնուրիւն», Պոսթոն, 1905 թ., գինն է թղթակաղմ 50 սէնթ. լաթակաղմ, 75 սէնթ.

«Ներկայ երկասիրութեանս նպատակն է վերլուծել մեր ազգային վերջին փորձառութիւններն և նշանակել անոնցմէ բղկող կենսական դասերը», ասուած է գրքի առաջաբանում: Հայերիս վերջին 25 տարինների կեանքը շատ աւելի հարուստ էր ցնորդներով և խելագարորէն խիզախ ճիգերով, քան մեր առանձնայատուկ պայմանների գիտակցութեամբ և մեր ոյժերի նպատակայարմար գործադրութեամբ: Այժմ, կարծես, սկսել ենք աւելի լուրջ և քննադատաբար վերաբերուել մեր կացութեան և անելիքին: Գարբիկեանի գրքի մանաւանդ քննադատական մասը արժանի է իւրաքանչիւր ոչ նախապաշարուած և խորհուող հայի առանձին ուշադրութեան: Պակաս համոզիչ են նրա գրքի վերջին գլուխները, որոնց մէջ փորձուում է «գործունութեան մեթոդ» և «ազգային նկարագիրներ» պարզելու:

Ա..-դօ՝ «Հայրենիքի կարօն», 1905, Պետերբուրգ, 5 կոպէկ:

«Հայրենիքի կարօտը՝» թրքահայ գաղթականների կեանքից քաղուած մի պատկեր է, որի ոչ նիւթն է նոր և ոչ էլ գոյնները:

Զուլումից փախած գաղթական Մուրադը վճռում է մուրալ հիւանդութիւնից հարկադրուած: Պատահում է սովորականը—վիրաւորում են Մուրադին. «Աներեններ... լսվեց «դախլի» ետուից մի խոպոտ ձայն: Այդ բառը խայթեց Մուրադի սիրտը: Թրդի սրի խայթոցը աւելի տանելի էր, քան այդ բառը:»

Ու Մուրադը՝ իրան հասցրած վիրաւորանքից սաստիկ վրդովուած՝ ընկնում է անկողին. երազում նրա առաջ պատկերանում է հայրենի գիւղը, նախկին խաղաղ ու երջանիկ կեանքը, ապա, քրդերի ճեռքով յանկարծ հայրենի օջախի քար ու քանդ լինումը: Արթնանալով՝ նա գտնում է իր գլխի վերև